Գրավի շուկայական արժեքը ազատ մրցակցության պայմաններում նմանատիպ և նույն պարամետրերով վաճառված գույքի համեմատության ժամանակ ստացված արժեքն է: Լիկվիդացիոն արժեքը շուկայում առավել սեղմ ժամկետներում գրավի արագ իրացման արժեքն է, որը ներկայացնում է առանց շուկայական ռիսկերի գրավի իրացումը: Վարկի տրամադրման ժամանակ որպես վարկի գումարի հաշվարկի հիմք է ընդունվում գրավի գնահատված լիկվիդացիոն արժեքը, ինչով բանկը սահմանափակում է վարկի ժամկետի ընթացքում գրավի արժեքի նվազման ռիսկը: Նշված ռիսկը նվազեցվում է նաև այն հանգամանքով, որ անշարժ և շարժական գույքերի գրավով ապահովված վարկերի դեպքում վարկ/գրավի գնահատված արժեք հարաբերակցությունը չի գերազանցում 80%-ը: Վարկեր տրամադրելիս բանկը մեծ կարևորություն է տալիս վարկառուի նախկինում ունեցած վարկերի սպասարկման պատմությանը, կայուն եկամուտների առկայությանը, մասնագիտական պատրաստվածությանը, քանզի նպատակ ունենալով ձևավորել որակապես կայուն վարկային պորտֆել, վարկերը հնարավորինս բարձր իրացվելի գրավով ապահովված լինելու փաստից բացի, առաջնային նշանակություն ունի վարկառուի պարտաճանաչությունը և վճարունակությունը վարկի սպասարկման առումով, ինչի հետևանքն է 2016թ.-ի մարտի 31-ի դրությամբ չաշխատող վարկերը կազմում են ընդհանուր վարկային պորտֆելի 2.51% (1 716 457 հազ.դրամ): Միաժամանակ նշենք, որ 31.03.16թ. դրությամբ վարկային ներդրումները կազմել են 68 300 536 հազ. դրամ՝ 31.12.15թ-ի 67 709 620 հազ. դրամի փոխարեն, այսինքն վարկային ներդրումներն աճել են 0.87%-ով:

Պահուստավորումների համապատասխանությունը

Վարկերի դիմաց պահուստավորումները կատարվում են ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ»-ի համաձայն:

Ռեպո և սվոպ գործարքները

2016թ. առաջին եռամսյակի ընթացքում կնքված ռեպո գործարքների ծավալը կազմել է 21 228 633 հազ. դրամ՝ նախորդ եռամսյակի 21 452 165 հազ. դրամի դիմաց՝ նվազելով 1.05%-ով: Տրամադրված սվոպ գործարքների ծավալը 2016թ. առաջին եռամսյակում կազմում է 5 561 070 հազ. դրամ՝ նախորդ եռամսյակի 7 262 851 հազ. դրամի դիմաց՝ նվազելով 23.44%-ով:

Աշխատակազմը

Բանկի կողմից որակապես կայուն վարկային պերտֆելի ձևավորումը արդյունք է նաև համապատասխան բարձր մասնագիտական պատրաստվածություն ունեցող մասնագետների, ներդրված աշխատանքային էֆիկայի և թիմային աշխատելառժի ունակության:

Վերահսկողություն (մոնիտորինգ) և վարկային ռիսկերի հայտնաբերում

Վարկերի սպասարկման բարձր որակը և ժամկետանց վարկերի բացակայությունը արդյունք է նաև վարկերի սպասարկման ընթացքում մշտական վերահսկողության, վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում վարկառուների հետ հարաբերությունների և մշտական կապի պահպանման, ինչի արդյունքում բանկը մշտապես տեղյակ է վարկառուի ֆինանսական վիճակից և անհրաժեշտության դեպքում արագ արձագանքում է իրավիճակի փոփոխություններին՝ ցուցաբերելով անհրաժեշտ օժանդակություն և խորհրդատվություն իրավիճակի կայունացման համար: Նշված միջոցառումները խիստ նպաստում են ժամանակին վարկային ռիսկերը բացահայտելուն և դրանք նվազեցնելուն կամ իսպառ վնասագերծելուն: Վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում մշտական հսկողություն է իրականացվում նաև վարկի նպատակային օգտագործման, վարկի ապահովման միջոցի՝ գրավի նկատմամբ, ինչը կատարվում է Բանկի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների կողմից: Վարկի նպատակային օգտագործման մոնիտորինգն իրականացվում է ըստ անհրաժեշտության, վարկի օգտագործման ուղղությունների առանձնահատկությունների, վարկի կանխիկ և անկանխիկ գործարքների և այլն: Անշարժ գույքի մոնիտորինգը իրականացվում է երեք ամիսը մեկ անգամ, առանձին դեպքերում՝ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ: Շարժական գույքի մոնիտորինգը իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

Եթե շուկայում տեղի է ունեցել գնահատված անշարժ գույքի գների տատանում մոտ 20%-ի չափով, ապա ելնելով Բանկի շահերից՝ Բանկը կարող է պահանջել կատարել Գրավի վերագնահատում:

Եթե գրավի արժեքը էապես էժանացել է շուկայում, ապա Բանկի պահանջով Վարկառուն առաջարկում է ապահովել լրացուցիչ Գրավով, որը, Բանկի հետ համաձայնեցնելով, գրավադրվում է հիմնական գրավի հետ միասին:

ՀՀ տարածքում տեղաբաշխված վարկերը՝ ըստ ՀՀ մարզերի տեղաբաշխվածության

ՀՀ մարզեր	31.03.2016	31.12.2015
Երևան	55,804,279	55,284,219
Գեղարքունիքի մարզ	1,038,669	961,899
Շիրակի մարզ	1,014,808	1,027,533
Լոռու մարզ	864,335	834,916
Վայոց Ձորի մարզ	3,076	3,704
Արմավիրի մարզ	2,600,933	2,598,253
Սյունիքի մարզ	702,731	747,248
Տավուշի մարզ	527,038	534,823
Արագածոտնի մարզ	391,916	415,442
Կոտայքի մարզ	2,089,795	2,014,780
Արարատի մարզ	2,553,179	2,565,699
ԼՂՀ	709,777	716,003
Ընդամենը	68,300,536	67,704,519

Աշխարհագրական կենտրոնացումներ
31.03.2016

Հողվածի անվանումը	ՀՀ	ԱՊՀ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ					
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	27,970,828	460,028	9,632,402	7,992	38,071,250
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,247,462	275,840	1,192,668	30,238	6,746,208
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	-	-	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	66,733,812	-	4,628	-	66,738,440
Վաճառքի համար մատչելի ֆինանսական արժեթղթեր	14,698,770	-	1,342	-	14,700,112
Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	-	-	-
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	-	-	-	-	-
Այլ ակտիվներ	4,417,928	-	-	-	4,417,928
Ընդամենը՝ ակտիվներ	119,068,800	735,868	10,831,040	38,230	130,673,938
Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածներ	7,236,795	69,715	5	-	7,306,515
Պարտավորություններ					
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,938,205	735,177	41,884,719	168,598	50,726,699
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	52,012,066	404,935	280,729	453,754	53,151,484
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	3,305,462	-	-	-	3,305,462
Այլ պարտավորություններ	768,397	-	12,058	-	780,455
Ընդամենը՝ պարտավորություններ	64,024,130	1,140,112	42,177,506	622,352	107,964,100
Զուտ դիրք	55,044,670	(404,244)	(31,346,466)	(584,122)	22,709,838

* Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն:

31.12.2015

Հողվածի անվանումը	ՀՀ	ԱՊՀ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ					
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	29,373,680	360,503	5,511,790	6,065	35,252,038
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,915,934	647,824	4,289,978	8,049	10,861,785
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	-	-	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	66,078,127	242	4,758	-	66,083,127
Վաճառքի համար մատչելի ֆինանսական արժեթղթեր	14,120,046	-	1,342	-	14,121,388
Հետզման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	1,023,313	-	-	-	1,023,313
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	-	-	-	-	-
Այլ ակտիվներ	4,643,467	1,138	41,062	154	4,685,821
Ընդամենը՝ ակտիվներ	121,154,567	1,009,707	9,848,930	14,268	132,027,472
Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածներ	5,690,688	92,754	3	-	5,783,445
Պարտավորություններ					
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,038,819	10,779,397	28,005,878	170,669	47,994,763
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	56,056,075	418,362	711,564	380,774	57,566,775
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	3,323,481	-	-	-	3,323,481
Այլ պարտավորություններ	659,129	9,081	2,662	-	670,872
Ընդամենը՝ պարտավորություններ	69,077,504	11,206,840	28,720,104	551,443	109,555,891
Զուտ դիրք	52,077,063	(10,197,133)	(18,871,174)	(537,175)	22,471,581

Վարկային ռիսկ պարունակող ակտիվները ըստ սեգմենտների և ռիսկայնության

31.03.2016

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ		Չաշխատող ակտիվներ							
	Ստանդարտ/Ոչ ռիսկային		Հսկվող/ Ռիսկային		Ոչ ստանդարտ/Միջին ռիսկային		Կասկածելի/ Բարձր ռիսկային		Անհուսալի	
	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ
Ընդամենը վարկեր, այդ թվում՝	65,642,976	30,825	639,390	270	182,779	108	273,295	95	3,431,012	662
1. Արդյունաբերություն	5,725,083	264	3,780	2	-	-	36,111	12	549,208	18
2. Գյուղատնտեսություն	1,501,550	1,153	15,939	12	15,453	9	43,948	2	87,612	16
3. Շինարարություն	3,983,171	72	4,567	1	-	-	-	-	132,164	4
4. Տրանսպորտ և կապ	4,934,482	65	53,310	4	5,245	2	-	-	83,063	1
5. Առևտուր	22,466,739	1,740	211,575	42	87,842	24	61,248	25	1,302,753	106
6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	5,134,466	186	31,509	10	24,954	2	-	-	167,695	9
7. Ֆինանսական հատված	-	-	-	-	-	-	-	-	-	-
8. Սպառողական վարկեր, այդ թվում՝	14,121,822	26,570	281,590	190	34,288	67	37,786	48	834,727	479
8.1 անշարժ գույքի գրավով	2,300,445	326	176,868	13	7,726	3	29,393	4	-	-
8.2 ավտոմեքենայի գրավով	280,122	55	-	-	-	-	-	-	-	-
9. Տնտեսության այլ ճյուղեր	7,775,663	775	37,120	9	14,997	4	94,202	8	273,790	29
Դերիտորական պարտքեր	1,929,866	22,897	395	28	241	7	73	8	200,224	119
Ինվեստիցիոն արժեթղթեր	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հետհաշվեկշռային հոդվածներ, այդ թվում՝	7,405,226	8,149	826	20	271	8	191	2	-	-
երաշխիքներ	134,735	18	-	-	-	-	-	-	-	-
ակրեդիտիվներ	-	-	-	-	-	-	-	-	-	-

31.12.2015

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ		Չաշխատող ակտիվներ							
	Ստանդարտ/Ոչ ռիսկային		Հսկվող/ Ռիսկային		Ոչ ստանդարտ/Միջին ռիսկային		Կասկածելի/ Բարձր ռիսկային		Անհուսալի	
	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ
Ընդամենը վարկեր, այդ թվում՝	65,056,909	29,406	379,094	231	370,655	118	276,469	96	3,061,650	634
1. Արդյունաբերություն	4,305,100	259	-	-	61,487	12	1,506	2	541,208	21
2. Գյուղատնտեսություն	1,395,054	1,056	23,606	14	83,662	3	10,252	3	56,835	13
3. Շինարարություն	3,486,220	70	-	-	-	-	42,600	1	14,675	3
4. Տրանսպորտ և կապ	5,037,229	68	13,253	4	-	-	-	-	83,574	1
5. Առևտուր	24,968,839	1,795	189,762	46	108,887	31	52,620	19	1,157,289	95
6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	5,296,145	199	31,925	4	-	-	1,953	3	162,555	7
7. Ֆինանսական հատված	-	-	-	-	-	-	-	-	-	-
8. Սպառողական վարկեր, այդ թվում՝	12,203,489	25,165	77,166	154	27,394	66	48,225	59	946,185	470
8.1 անշարժ գույքի գրավով	2,844,749	352	9,014	5	2,042	2	38,321	11	-	-
8.2 ավտոմեքենայի գրավով	249,654	61	-	-	-	-	-	-	-	-
9. Տնտեսության այլ ճյուղեր	8,364,833	794	43,382	9	89,225	6	119,313	9	99,329	24
Դեբիտորական պարտքեր	1,122,896	22,087	247	12	194	8	52	7	200,260	108
Ինվեստիցիոն արժեթղթեր	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հետհաշվեկշռային հոդվածներ, այդ թվում՝	5,685,196	8,351	533	24	174	10	60	6	-	-
երաշխիքներ	210,390	25	-	-	-	-	-	-	-	-
ակրեդիտիվներ			-	-	-	-	-	-	-	-

Վարկային ռիսկ պարունակող ակտիվները ըստ տարածաշրջանների և ռիսկայնության

31.03.2016

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ		Չաշխատող ակտիվներ							
	Ստանդարտ/Ոչ ռիսկային		Հսկվող/ Ռիսկային		Ոչ ստանդարտ/Միջին ռիսկային		Կասկածելի/ Բարձր ռիսկային		Անհուսալի	
	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ
Վարկեր, այդ թվում՝	65,642,976	30,825	639,390	270	182,779	108	273,295	95	3,431,012	662
1. ՀՀ ռեզիդենտներին	65,638,349	30,824	639,390	270	182,779	108	273,295	95	3,394,188	661
2. ԱՊՀ երկրների ռեզ.-ին (ըստ երկրների)	-	-	-	-	-	-	-	-	36,824	1
Ռուսաստանի Դաշնություն	-	-	-	-	-	-	-	-	36,824	1
3. ՏՀԶԿ երկրների ռեզ.-ին (ըստ երկրների),	4,627	1	-	-	-	-	-	-	-	-
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	4,627	1	-	-	-	-	-	-	-	-
Մեծ Բրիտանիա	-	-	-	-	-	-	-	-	-	-
4. Ոչ ՏՀԶԿ երկրների ռեզիդենտներին (ըստ երկրների)	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	65,642,976	30,825	639,390	270	182,779	108	273,295	95	3,431,012	662

31.12.2015

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ		Չաշխատող ակտիվներ							
	Ստանդարտ/Ոչ ռիսկային		Հսկվող/ Ռիսկային		Ոչ ստանդարտ/Միջին ռիսկային		Կասկածելի/ Բարձր ռիսկային		Անհուսալի	
	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ
Վարկեր, այդ թվում՝	65,056,909	29,406	379,094	231	370,655	118	276,469	96	3,061,650	634
1. ՀՀ ռեզիդենտներին	65,051,909	29,404	379,094	231	370,655	118	276,469	96	3,017,946	631
2. ԱՊՀ երկրների ռեզիդենտներին (ըստ երկրների)	242	1	-	-	-	-	-	-	37,051	1
Ռուսաստանի Դաշնություն	242	1	-	-	-	-	-	-	37,051	1
3. ՏՀԶԿ երկրների ռեզիդենտներին (ըստ երկրների),	4,758	1	-	-	-	-	-	-	6,653	2
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	4,758	1	-	-	-	-	-	-	-	-
Կանադա	-	-	-	-	-	-	-	-	-	-
Մեծ Բրիտանիա	-	-	-	-	-	-	-	-	6,653	2
4. Ոչ ՏՀԶԿ երկրների ռեզիդենտներին (ըստ երկրների)	-	-	-	-	-	-	-	-	-	-
Վրաստան	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	65,056,909	29,406	379,094	231	370,655	118	276,469	96	3,061,650	634

Ծանոթագրություն 32.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է VaR մեթոդով, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների միջև կախվածությունը: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Բանկը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

Շուկայական ռիսկի վերլուծություն

Խորհուրդը սահմանել է ռիսկի ընդունելի սահմանաչափերը: Բանկը կիրառում է VaR (ռիսկային արժեքի) մեթոդը գնահատելու համար շուկայական ռիսկը և հնարավոր կորուստները՝ հիմնվելով մի շարք չափանիշների և շուկայի պայմանների փոփոխությունների մասին ենթադրությունների վրա: VaR-ը մեթոդ է, որն օգտագործվում է ֆինանսական ռիսկը չափելու համար՝ գնահատելով հնարավոր բացասական փոփոխությունը պորտֆելի շուկայական արժեքում որոշված վստահության մակարդակի և նշված ժամկետի համար: Բանկն օգտագործում է ամբողջական ոչ գծային VaR մոդել տոկոսադրույքների, գների տարբերությունների և տատանումների ռիսկերի համար: Այս հաշվարկները հիմնված են Մոնտե-Կառլոյի սիմուլացիաների վրա՝ ստացված փոփոխությունների/փոխազդեցությունների մատրիցայից: Արտարժույթի փոխարժեքների հետ կապված VaR-ի համար Բանկն օգտագործում է փոփոխությունների/փոխազդեցությունների մոդելը: Կապիտալի գործիքներին բնորոշ ռիսկը չափվում է օգտագործելով միագործոն մոդելը:

VaR մեթոդի նպատակները և սահմանափակումները

Բանկն օգտագործում է սիմուլացիոն մոդելներ առևտրային պորտֆելի շուկայական արժեքում փոփոխությունները գնահատելու համար, որոնք հիմնված են նախորդ հինգ տարիների պատմական տվյալների վրա: VaR մոդելները նպատակ ունեն չափել շուկայական ռիսկը նորմալ շուկայական միջավայրում: Մոդելը ենթադրում է, որ ռիսկի գործոններում յուրաքանչյուր փոփոխություն, որքազդում է նորմալ շուկայական միջավայրի վրա, ենթարկվում է նորմալ բաշխման: Բաշխումը հաշվարկվում է օգտագործելով երկրաչափական պրոգրեսիայով կշռված պատմական տվյալներ: VaR-ի օգտագործումն ունի սահմանափակումներ, որովհետև այն հիմնված է պատմական կորելիացիաների և շուկայական գների տատանումների վրա և ենթադրում է, որ ապագա գնային փոփոխությունները կենթարկվեն վիճակագրական բաշխման: Այն պատճառով, որ VaR-ը տեղեկատվության տրամադրման զգալիորեն կախված է պատմական տվյալներից և չի կարող հստակորեն կանխատեսել ռիսկի գործոններում ապագա փոփոխությունները, շուկայական մեծ փոփոխությունների հավանականությունը կարող է թերագնահատված լինել, եթե ռիսկի գործոնների փոփոխությունները չհամընկնեն նորմալ բաշխման ենթադրության հետ: VaR-ը կարող է նաև թերագնահատված կամ գերագնահատված լինել կապված ռիսկի գործոնների վերաբերյալ ենթադրությունների և նման գործոնների միջև հարաբերությունների հետ որոշ գործիքների համար: Չնայած, որ դիրքերը կարող թեն փոխվել օրվա ընթացքում, VaR-ը միայն ներկայացնում է պորտֆելների ռիսկը յուրաքանչյուր գործառնական օրվա փակման դրությամբ, և այն չի հաշվարկում այն վնասները, որոնք կարող են տեղի ունենալ 99% վստահության մակարդակից դուրս:

Գործնականում, ընթացիկ առևտրային արդյունքները կարող են տարբերվել VaR-ի հաշվարկներից և, մասնավորապես, հաշվարկը չի տրամադրում շահույթների և վնասների վերաբերյալ էական տեղեկատվություն անկայուն շուկայի պայմաններում: VaR մոդելների արժանահավատությունը որոշելու համար, ընթացիկ արդյունքները պարբերաբար վերահսկվում են VaR հաշվարկների համար օգտագործվող ենթադրությունների և չափանիշների ճշմարտացիությունը ստուգելու համար: Շուկայական ռիսկի դիրքերը նույնպես ենթարկվում են պարբերական սթրես թեստերի, համոզված լինելու համար, որ Բանկը կդիմակայի արտակարգ շուկայական իրադարձություններին:

VaR ենթադրություններ

Բանկի չափած VaR-ը 99% վստահությամբ գնահատում է պոտենցիալ վնասը, որ չի սպասվում որ կգերազանցվի, եթե ընթացիկ շուկայական ռիսկի դիրքերը անփոփոխ մնան մեկ օրվա ընթացքում: 99% վստահության միջակայքի օգտագործումը նշանակում է, որ մեկ օրվա կտրվածքով, VaR-ի արժեքը գերազանցող վնասները պետք է լինեն միջինում ոչ հաճախ քան հարյուր օրը մեկ անգամ:

Քանի որ VaR-ը Բանկի շուկայական ռիսկի կառավարման բաղկացուցիչ մասն է, բոլոր առևտրահիմն գործառնությունների համար սահմանվել են VaR սահմանաչափեր, և ռիսկի չափերը վերանայվում են ամեն օր ղեկավարության կողմից:

Արտարժույթային ռիսկ

Բանկը արտարժույթային ռիսկի հաշվարկն իրականացնում է ՎաՌ մեթոդաբանության համաձայն: Այդ նպատակով վերցվում են արտարժույթային փոխարժեքների համապատասխան ժամանակային շարքերը և արտարժույթային դիրքերի վերաբերյալ տվյալները: Հաշվարկվում է արտարժույթների փոխարժեքների տատանումների կոռելյացիոն մատրիցը և արտարժույթային ՎաՌ-ը (99% վստահության մակարդակի պայմաններում), որի հիման վրա հաշվարկվում է Բանկի տվյալ օրվա արտարժույթային ռիսկը:

31.03.16

Հոդվածի անվանումը	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ*	II խմբի արտարժույթ**	Ընդամենը
Ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	15,379,970	22,223,260	468,020	38,071,250
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,264,198	5,323,311	158,699	6,746,208
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	-	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	21,834,779	44,903,410	251	66,738,440
Վաճառքի համար մատչելի ֆինանսական արժեթղթեր	12,196,487	2,503,625	-	14,700,112
Հետզման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	-	-
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	-	-	-	-
Այլ ակտիվներ	3,941,476	476,452	-	4,417,928
Ընդամենը՝ ակտիվներ	54,616,910	75,430,058	626,970	130,673,938
Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածներ	1,842,887	3,933,582	6,976	5,783,445
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,303,173	41,423,101	425	50,726,699
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	19,750,327	33,206,959	194,198	53,151,484
Վճարվելիք գումարներ	13,571	-	-	13,571
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	410,229	2,895,233	-	3,305,462
Այլ պարտավորություններ	705,383	61,489	12	766,884
Ընդամենը՝ պարտավորություններ	30,182,683	77,586,782	194,635	107,964,100
Զուտ դիրք	24,434,227	(2,156,724)	432,335	22,709,838

Արտարժութային ռիսկ ըստ ածանցյալ ֆինանսական գործիքների
31.03.2016

Հոդվածի անվանումը	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ*	II խմբի արտարժույթ**	Ընդամենը
Սվոպերի գծով	-	-	-	-
- պարտավորություններ	2,192,334	-	-	-
- պահանջներ	-	2,173,226	-	-
Զուտ դիրք ըստ ածանցյալ ֆինանսական գործիքների	(2,192,334)	2,173,226	-	-
Զուտ բաց դիրք*	22,241,893	16,502	432,335	22,709,838

31.12.2015

Հոդվածի անվանումը	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ*	II խմբի արտարժույթ**	Ընդամենը
Ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	18,333,545	16,551,925	366,568	35,252,038
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,703,471	8,860,709	297,605	10,861,785
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	-	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	20,372,694	45,710,133	300	66,083,127
Վաճառքի համար մատչելի ֆինանսական արժեթղթեր	12,055,122	2,066,266	-	14,121,388
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	1,023,313	-	-	1,023,313
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	-	-	-	-
Այլ ակտիվներ	4,104,529	581,292	-	4,685,821
Ընդամենը՝ ակտիվներ	57,592,674	73,770,325	664,473	132,027,472
Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածներ	1,842,887	3,933,582	6,976	5,783,445
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,736,202	37,250,844	7,717	47,994,763
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	21,258,894	36,155,964	151,917	57,566,775
Վճարվելիք գումարներ	13,858	-	-	13,858
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	410,400	2,913,081	-	3,323,481
Այլ պարտավորություններ	636,938	20,068	8	657,014
Ընդամենը՝ պարտավորություններ	33,056,292	76,339,957	159,642	109,555,891
Զուտ դիրք	24,536,382	(2,569,632)	504,831	22,471,581

**«I խմբի արտարժույթի» կազմում ներառված են՝ ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ, Անգլիական ֆունտ ստեռլինգ, Շվեյցարական ֆրանկ, Ճապոնական Իեն:
 ** «II խմբի արտարժույթի» կազմում ներառված են՝ Ռուսաստանյան ռուբլի, Ուկրաինական գրիվնա, ՄԱԷ դիրխամ, Վրացական լարի:

Արտարժույթային ռիսկ ըստ ածանցյալ ֆինանսական գործիքների

31.12.2015

Հոդվածի անվանումը	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ*	II խմբի արտարժույթ**	Ընդամենը
Սվոպերի գծով	-	-	-	-
- պարտավորություններ	2,427,716	-	-	-
-պահանջներ	-	2,422,403	-	-
Զուտ դիրք ըստ ածանցյալ ֆինանսական գործիքների	(2,427,716)	2,422,403	-	-
Զուտ բաց դիրք*	22,108,666	(147,229)	504,831	22,471,581

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկի գնահատում

2016թ. առաջին եռամսյաում տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջին կուտակային ճեղքվածքը բացասական է 19 516 055 հազ. դրամ՝ նախորդ եռամսյակի բացասական 16 487 417 հազ. դրամի դիմաց, այսինքն՝ բանկի զգայունությունը ըստ ակտիվների նվազել են: Միջին կուտակային ճեղքվածքը 2015թ-ի չորրորդ եռամսյակում նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 3 028 639 հազ. դրամով:

31.03.2016 թ-ի դրությամբ տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների հարաբերակցությունը 31.12.2015թ.-ի համեմատ նվազել է 1.76 տոկոսային կետով՝ կազմելով 82.422% նախորդ եռամսյակի 84.185% -ի դիմաց:

Տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների կուտակային ճեղքվածքը և դրանց հարաբերակցության դինամիկան 2015թ.-2016թ.

ԱՄՍԱԹԻՎ	Կուտակային ճեղքվածք	Տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների հարաբերակցություն (%)
31.01.15	(4,917,229)	95.21
28.02.15	(11,722,291)	88.94
31.03.15.	(13,094,482)	88.08
31.04.15	(10,925,696)	89.66
31.05.15	(18,340,102)	82.65
30.06.15.	(13,771,061)	86.11
31.07.15.	(12,319,409)	87.73
31.08.15.	(13,889,785)	86.42
30.09.15.	(15,842,301)	84.61
31.10.15.	(18,018,060)	82.38
30.11.15.	(15,328,992)	85.55
31.12.15.	(16,115,198)	84.63
31.01.16	(17,659,499)	83.95
29.02.16	(21,798,122)	80.57
31.03.16	(19,090,545)	82.75

Բանկը յուրաքանչյուր ամսվա (միջին օրական կտրվածքով) հաշվարկում է ներգրավված միջոցների (ռեսուրսների) արժեքը՝ կիրառելով սեփական մեթոդաբանությունը: Հաշվարկը իրականացվում է նաև առանձին՝ ըստ ժամկետային և ցպահանջ ներգրավված միջոցների: Արդյունքները յուրաքանչյուր ամիս քննարկվում են Բանկի ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովի կողմից, և կիրառում են տեղաբաշխված միջոցների արժեքի (տոկոսադրույքի) որոշման համար:

31.03.2016

Հողվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
	խցրան	խախտված	խցրան	խախտված	խցրան	խախտված	խցրան	խախտված	խցրան	խախտված	խցրան	խախտված
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում	1,184,103	827,215	-	1,383,977	-	773,133	-	1,320,294	42,949	540,891	-	-
- վարկեր	-	-	-	1,383,977	-	773,133	-	1,320,294	42,949	540,891	-	-
- ավանդ	-	827,215	-	-	-	-	-	-	-	-	-	-
- հետգն. պայմանագ.	1,184,103	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
- այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր, փոխատվություններ, այդ թվում	1,317,058	29,593	2,383,920	173,610	2,592,584	617,264	1,819,806	3,420,381	9,024,732	13,606,222	5,000,378	28,071,543
- վարկեր	1,317,058	29,593	2,383,920	173,610	2,592,584	617,264	1,819,806	3,420,381	8,992,868	13,566,051	5,000,378	28,071,543
- ֆատկորինգ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
- լիզինգ	-	-	-	-	-	-	-	-	31,864	40,171	-	-
- հետգնման պայմանագրեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Վաճառքի համար նատչելի արժեթղթեր, այդ թվում	-	-	-	-	1,398,881	-	-	-	9,905,891	1,942,892	835,876	560,733
- երկարաժամկետ պարտք գործիքներ	-	-	-	-	1,398,881	-	-	-	9,905,891	1,942,892	835,876	560,733
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Տեղաբաշխված այլ միջոցներ	29,486	11,201	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	2,530,647	868,009	3,782,801	1,557,587	2,592,584	1,390,397	1,819,806	4,740,675	18,973,572	16,090,005	5,836,254	28,632,276

Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ.-ների նկատմամբ, այդ թվում՝	366,896	515,515	404,551	722,330	-	1,504,889	399,184	-	6,217,432	31,434,292	1,726,800	7,211,009
- վարկեր	-	-	-	722,330	-	1,504,889	-	-	2,931,759	31,250,895	1,726,800	7,211,009
- ավանդներ	366,896	515,515	404,551	-	-	-	399,184	-	3,285,673	183,397	-	-
- հետգնման պայամանագրեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
- այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ, այդ թվում՝	13,822,265	17,010,475	112,581	23,097	167,954	149,071	1,382,044	8,286,742	3,922,592	7,857,854	7,958	9,627
- վարկեր	-	-	-	-	-	-	-	-	2,570,504	-	-	-
- ավանդներ	13,822,265	17,010,475	112,581	23,097	167,954	149,071	1,382,044	8,286,742	1,352,088	7,857,854	7,958	9,627
- հետգնման պայամանագրեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	410,229	2,895,233	-	-
- այլ պարտատոմսեր	-	-	-	-	-	-	-	-	410,229	2,895,233	-	-
Ներգրված այլ միջոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	14,189,161	17,525,990	517,132	745,427	167,954	1,653,960	1,781,228	8,286,742	10,550,253	42,187,379	1,734,758	7,220,636
Զուտ դիրք	(11,658,514)	(16,657,981)	3,265,669	812,160	2,424,630	(263,563)	38,578	(3,546,067)	8,423,319	(26,097,374)	4,101,496	21,411,640

31.12.2015

Հողվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
	խցումն	խախտված	խցումն	խախտված	խցումն	խախտված	խցումն	խախտված	խցումն	խախտված	խցումն	խախտված
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում	1,591,433	483,750	-	1,319,040	-	1,035,709	-	187,211	44,929	545,651	-	-
-վարկեր	-	483,750	-	1,319,040	-	1,035,709	-	187,211	44,929	545,651	-	-
-ավանդ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
- հետզն. պայմանագ.	1,591,433	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
-այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր, փոխատվություններ, այդ թվում	1,326,565	9,971	2,603,385	387,412	1,423,942	561,274	1,149,050	5,007,169	8,787,947	19,014,784	5,570,689	21,739,242
- վարկեր	1,326,565	9,971	2,603,385	387,412	1,423,942	561,274	1,149,050	5,007,169	8,753,444	18,969,095	5,570,689	21,739,242
-լիզինգ	-	-	-	-	-	-	-	-	34,503	45,689	-	-
- հետզն. պայմանագ.	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
-այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր, այդ թվում	-	-	243,529	-	-	-	-	-	8,820,295	1,657,977	2,640,404	379,172
- երկարաժամկետ պարտք. գործիքներ	-	-	243,529	-	-	-	-	-	8,820,295	1,657,977	2,640,404	379,172
Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	-	-	-	-	-	-	1,005,652	-	-	-
Տեղաբաշխված այլ միջոցներ	28,480	10,632	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	2,946,478	504,353	2,846,914	1,706,452	1,423,942	1,596,983	1,149,050	5,194,380	18,658,823	21,218,412	8,211,093	22,118,414

Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ.-ների նկատմամբ, այդ թվում՝	2,812,429	264,483	50,000	125,088	-	1,447,691	395,000	118,723	5,048,073	31,352,102	2,314,363	2,811,924
- վարկեր	1,000,000	-	-	125,088	-	1,365,453	-	118,723	2,326,372	31,175,603	2,314,363	2,811,924
- ավանդներ	812,429	264,483	50,000	-	-	82,238	395,000	-	2,721,701	176,499	-	-
- հետգնման պայմանագրեր	1,000,000	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
- այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ, այդ թվում՝	15,228,416	19,416,636	31,643	91,531	147,089	228,755	1,020,172	7,664,028	4,063,464	8,715,320	4,000	10,068
- վարկեր	-	-	-	-	-	-	-	-	2,494,529	-	-	-
- ավանդներ	15,228,416	19,416,636	31,643	91,531	147,089	228,755	1,020,172	7,664,028	1,568,935	8,715,320	4,000	10,068
- այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	400,000	2,902,500	-	-
- այլ պարտատոմսեր	-	-	-	-	-	-	-	-	400,000	2,902,500	-	-
Ներգրված այլ միջոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	18,040,845	19,681,119	81,643	216,619	147,089	1,676,446	1,415,172	7,782,751	9,511,537	42,969,922	2,318,363	2,821,992
Զուտ դիրք	(15,094,367)	(19,176,766)	2,765,271	1,489,833	1,276,853	(79,463)	(266,122)	(2,588,371)	9,147,286	(21,751,510)	5,892,730	19,296,422

Տոկոսադրույքի ռիսկն իրենից ներկայացնում է տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով առաջացող ռիսկը:

